ԱՎԱՐՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՎԱՐՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԼԱՐԻՍԱ ՓԱՆՅԱՆ

Լեզվի հնչյունային արտահայտությունը մի բարդ միասնություն է, որի մասերի փոխներգործությունը իրականացվում է մակարդակային կազմակերպվածության սկզբունքով։ Տարբեր մակարդակների միավորների հնչյունային սահմանների որոշումը հնչյունաբանական կարևոր հարցերից է և մեծ նշանակություն ունի կիրառական խնդիրների լուծման համար, մասնավորապես խոսքի հատույթավորման օբյեկտիվ և ավելի ճշգրիտ հնչյունային չափանիշներ մշակելու հարցում, մի խնդիր, որը չափազանց կարևոր է խոսքի ավտոմատ ընկալման համար։

Ի՞նչն է ընդունվում որպես խոսքի հատույթավորման միավոր։ Տարբեր հեղինակներ ընդունում են տարբեր միավորներ՝ շարույթ, իմաստային խումբ, տոնային խումբ, շնչառական խումբ, ռիթմական խումբ և այլն։ Հնչերանգի ուսումնասիրության նվազագույն միավոր ընդունում ենք շարույթը՝ որպես հնչերանգիմաստային միասնություն, որն առաջանում է խոսքի պրոցեսում։ Եթե նախադասության հնչերանգը որոշվում է հաղորդակցական ուղղվածությամբ, ընդ որում յուրաքանչյուր հաղորդակցային տիպ բնորոշվում է իրեն հատուկ հնչերանգով, ապա շարույթի հնչերանգը՝ քանի որ այն չունի ինքնուրույն հաղորդակցական նշանակություն, պայմանավորված է նրա անկախության աստիճանով, նրա ավարտվածությամբ կամ անավարտվածությամբ։ Բազմաշարույթային նախադասություններում տարբերում են ավարտուն և անավարտ շարույթներ։ Ընդ որում, նախադասության հաղորդակցային տիպը բնորոշվում է հիմնականում վերջին շարույթի տոնային ավարտվածությամբ, մինչդեռ անավարտ շարույթի տոնը պայմանավորված է հաջորդ շարույթով և հաղորդում է ոճական տարբեր երանգներ։

Իսկ ո՞րն է տոնային ավարտվածությունը և ինչպիսի դեր ունի այն շարույթի ձևավորման գործում։ Հայտնի է, որ հնչերանգը լեզվաբանական բարդ և դեռևս վերջնականապես չլուծված հասկացություն է։ Նրա բաղադրիչների թվին են դասվում մեղեդին կամ հիմնական տոնի շարժումը, դադարը, շեշտը, տեմպը և տեմբրը։ Հնչերանգի այս բաղադրիչները իրականում գոյություն ունեն միասնության մեջ, թեև գիտական նպատակներով դրանք կարող են քննվել և առանձին։

Հնչերանգը ունի օբյեկտիվ բնույթ ու որոշակի լեզվաբանական նշանակություն և պայմանավորված է տվյալ լեզվական կոլեկտիվի սովորություններով։ Միևնույն նախադասությունը կարող է ընթերցվել ամենատարբեր երանգներով, սակայն խոսողներից ամեն մեկը օգտագործում է միայն այն միջոցները, որոնք գոյություն ունեն տվյալ լեզվում։

Մեր ուսումնասիրության նպատակն է որոշել հայերենում ավարտուն և անավարտ շարույթների տոնային առանձնահատկություններն ու սահմանազատիչ միջոցները։ Նման աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ այն կարող է նպաստել հայկական միջավայրում օտար լեզվի դասավանդման դժվարությունները հաղթահարելուն։ Ուսումնասիրությունը կատարվել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի լաբորատորիայում՝ Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոսների մասնակցությամբ։ Կատարվել է տեքստի ինչպես գործիքային,

այնպես էլ լսողական վերլուծություն, որին մասնակցել են մոտ 10 ունկնդիրներ և հաղորդավարներ։ Փորձարկման նյութը ընտրվել է Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» և «Մենավոր ընկուզենին» ստեղծագործություններից. այն ձայնագրվել է և ենթարկվել նախ՝ լսողական վերլուծության, այնուհետև՝ օսցիլոգրաֆիկ ուսումնասիրության։ Ունկնդիրների առջև դրվել են հետևյալ խնդիրները. լսել տեքստը, բաժանել շարույթների և որոշել յուրաքանչյուր շարույթի տոնային ձևավորման եղանակը։ Հետագայում այդ նույն հատվածները գրանցվել են ինտոնոգրաֆի վրա և մշակվել։ Ուսումնասիրված նյութը պարունակում է մոտ 70 ավարտուն և անավարտ շարույթ։

Լսողական վերլուծությունը մեկ անգամ ևս հավաստեց, որ խոսքի շարույթային անդամահատումը ոչ բոլոր դեպքերում են նույնական և, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ինչպես հաղորդավարների, այնպես էլ ունկնդիրների կողմից տեքստի ընկալման անհատական առանձնահատկություններով։ «Վերջին ուսուցիչը» պատմվածքից վերցրած հատվածից շարույթային անդամահատումը, ըստ հաղորդավարների այսպիսին է. 1-ին հաղորդավարը առանձնացրել է 34 շարույթ, 2-րդ հաղորդավարը՝ 32, 3-րդը՝ 27, իսկ «Մենավոր ընկուզենուց» ընտրված հատվածում՝ 1-ին հաղորդավարը՝ 43, 2-րդը՝ 40, 3-րդը՝ 37։ Քննենք հետևյալ օրինակը. «Այս ամենն իհարկե փոխաբերական առումով։ Իրականում դպրոցական օրն էլ սկսվեց սովորականի պես»։ Նախադասության «Իրականում դպրոցական օրն էլ սկսվեց սովորականի պես» հատվածը երրորդ հաղորդավարը դիտել է որպես մի շարույթ, մինչդեռ 1-ին և 2-րդ հաղորդավարների մոտ այն բաժանվել է երեք շարույթների, որոնք առանձնացվում են ինչպես տոնով, այնպես էլ դադարով. «Իրականում /դպրոցական օրն էլ/ սկսվեց սովորականի պես»։ Կարելի է ենթադրել, որ 1-ին և 2-րդ հաղորդավարների՝ այդ հատվածի ընկալումը ավելի արտահայտիչ է։

Հայտնի է, որ դադարները, ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջավոր, անդամահատման հիմնական միջոցներից են, որոնք զուգակցվում են հնչերանգի հետ՝ լրացնելով և ուժեղացնելով նրա արտահայտչականությունը։ Այն բոլոր դեպքերում, երբ իմաստով սերտ կապված անավարտ շարույթները արտասանվում են առանց միջանկյալ դադարի, շարույթների բաժանումը իրականացվում է տոնային ավարտի միջոցներով։ Օրինակ, «Բայց երկնքի այն փոքրիկ հատվածում... Ահա այդ հատվածում նույն առավոտյան մուգ թանաքագույն ամպեր կուտակվեցին»։ Նախադասության հետևյալ մասը՝ «Ահա այդ հատվածում նույն առավոտյան», հաղորդավարներից մեկը ընթերցել է առանց դադարի։ Սակայն շարույթային սահմանի առանձնացումը պայմանավորված է հատվածում և նույն բառերի միջև նկատվող տոնային փոխհարաբերությամբ՝ 2 կիսատոն բարձրացումով։

Խոսքային շղթայի շարույթային անդամահատման հետաքրքիր դեպքեր են միջանկյալ բառերով նախադասությունները, որոնք մտնում են կամ նախորդ կամ հաջորդ իմաստային խմբերի մեջ, երբեմն հանդես գալով որպես առանձին, ինքնուրույն, լիովին պատճառաբանված շարույթներ։ Այսպես. «Վարորդը հայհոյում էր ճանապարհը, լեյտենանտ Անտոնյանին, սերժանտ Ամատունուն և, մանավանդ ուսուցիչ Սահակ Կամսարյանին»։ Ինտոնոգրամային վերլուծությունը ցույց է տալիս, որ այս նախադասության «մանավանդ» բառը ունի դրսևորման երեք տարբեր եղանակ։ 1-ին հաղորդավարի մոտ այն սերտորեն կապված է հաջորդ շարույթի հետ և հնչում է առանց դադարի (մանավանդ, ուսուցիչ Սահակ Կամսարյանին) և միայն տոնի փոփոխությունը՝ 5 կիսատոն տարբերությամբ, մատնանշում է, որ «մանավանդ» բառը առանձին շարույթ է։ 2-րդ հաղորդավարի մոտ «մանավանդ»-ը մտնում է նախորդ շարույթի կազմի մեջ։ Իսկ 3-րդ հաղորդավարի մոտ այդ միջանկյալ բառը առանձին շարույթ է և առանձնանում է թե՛ դադարով և թե՛ տոնով։

Պետք է նշել նաև այն դեպքը, երբ և շաղկապը հանդես է գալիս որպես առանձին շարույթ իր ինքնուրույն հնչերանգային ձևավորմամբ։ Օրինակ՝ «Անզգույշ մի շարժում, ուշադրության թեկուզ մի կաթիլի կորուստ, և... կգահավիժեն ներքև, կիսատ թողնելով այսօրվա գործն էլ, կյանքն էլ, հայհոյանքն էլ»։

Այս նախադասության արտահայտման հիմնական իմաստային կենտրոնը «և» շաղկապն է, որը դդալի հուզական բեռնվածություն ունի։ «Եվ»-ի առանձնացումը որոշ դեպքերում բնութագրվում է երկարատև դադարով (250—400 միլիվայրկյան) և տոնի կտրուկ բարձրացմամբ. երբեմն այն հասնում է (ինչպես 2-րդ հաղորդավարի մոտ) 5 կիսատոնի։

Այսպիսով, վերը բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ ոչ միայն լիարժեք բառերն են հանդես դալիս որպես առանձին շարույթներ, այլև սպասարկու բառերը, որոնք շնորհիվ իմաստի, տոնի և դադարի փոփոխության, կարող են կազմել առանձին իմաստային հնչերանգային միավորներ։ Հայտնի է, որ հիմնական տոնի հաճախականությունը հնչերանգի առաջնային բաղադրիչն է և այն սահմանալատիչ հատկանիշը, որով շարույթները անջատվում են մեկը մյուսից։

Մեր փորձառական ուսումնասիրության ընթացքում ավարտուն և անավարտ շարույթների հնչյունական առանձնահատկությունները բացահայտելու ժամանակ ուշադրության կենտրոնում է եղել հենց տոնային բաղադրիչը։ Ինստրումենտալ տվյալները ցույց տվեցին, որ ի տարբերություն ավարտուն շարույթի, անավարտ շարույթի տոնը զգալի բազմազանություն ունի։ Մեր կողմից ընտրված հատվածները պատմողական նախադասություններ են, որոնց բոլոր ավարտուն շարույթները բնորոշվում են ձայնի աստիճանական իջեցումով և անկումով. օրինակ՝ «Գարնանային սովորական առավոտ էր։ Ճանապարհը դատիվեր էր ու քարքարոտ»։

Իսկ ինչո՞վ է բնութագրվում անավարտ շարույթի տոնը։ Որո՞նք են անավարտ շարույթներում օգտագործվող տոները։ Հաշվումները ցույց տվեցին, որ 52 անավարտ շարույթներում տոնը ավելի հաճախ բարձրացող է և փորձարկվող ուսքստերում այն կազմում է 55%, իսկ իջնող տոնը՝ 35%. մնացած դեպքերում գործածվում է հավասար տոն։ Քննենք հետևյալ օրինակները. «Բայց երկնքի այն փոքրիկ հատվածում, երևի մի երեք-չորս հարյուր քառակուսի մետր, որի տակ Մովսես Խորենացու անվան դպրոցն էր, ահա այդ հատվածում նույն առավոտյան մուգ թանաքագույն ամպեր կուտակվեցին»։ Այս նախադասությունը բաժանվել է շարույթների. 6 շարույթ առանձնացրել են առաջին և երկրորդ հաղորդավարները, իսկ 4 շարույթ՝ երրորդը։ Երեք հաղորդավարների օգտագործած տոներն էլ չեն համապատասխանում միմյանց, սակայն այս հատվածի ընթերցումը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ անավարտ շարույթներում առավել հաճախականը բարձրացող տոնն է։ Հավասար տոն միայն մեկ դեպքում է օգտագործվել։

Փորձենք պատճառաբանել հաղորդավարներից մեկի օգտագործած տոնային դրսևորումները։ Առաջին անավարտ շարույթը («Բայց երկնքի այն փոքրիկ հատվածում») բնորոշվում է հավասար տոնով։ Մի կողմ թողնենք միջանկյալ մասը («երևի մի երեք-չորս հարյուր քառակուսի մետր, որի տակ Մովսես Խորենացու անվան դպրոցն էր») և քննենք «ահա այդ հատվածում նույն առավոտյան» կից շարույթները։ «Հատվածում» բառի վերջին վանկում նկատվում է 4 կիսատոն բարձրացում։ «Նույն առավոտյան» շարույթի վերջին վանկերում գրանցվում է 2 կիսատոն բարձրացում։ Վերջին վանկի տոնը պայմանավորված է նախադասության հաջորդ հատվածի բովանդակությամբ։ Բարձրացող տոնը ունկնդրին կողմնորոշում է, որ հաղորդումը չի ավարտված։ Առաջին դեպքում «Բայց երկնքի այն փոքրիկ հատվածում» անավարտ շարույթի հաջորդ միջանկյալ նախադասությունը կարծես մխրճվում է ամբողջ նախադասության ընդհանուր բովանդակության մեջ, դրանով իսկ առաջին անավարտ շարույթին հաղորդելով հարաբերական ինքնուրույնություն։ Այնուհետև նկատվում է լարվածության աստիճանական աճ՝ կապված բովանդակության հետ. սպասվում է, թե ինչ է պատահել՝ «ահա այդ հատվածում» և հետո՝ «նույն առավոտյան մուգ թանաքագույն ամպեր կուտակվեցին»։ Սա այն ինֆորմացիան է, որի համար արվել էր տվյալ հաղորդումը (նախադասության սկիզբը)։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իջնող տոների օգտագործումը տրվյալ դեպքում պատճառաբանված է և լիովին արդարացվում է ամբողջ հնչա-

դասության իմաստով։ Բարձրացող տոնը այստեղ հավանորեն օգտագործվում է լսողին հետաքրքրելու համար։

Անավարտ շարույթի բարձրացող տոնը սովորաբար օգտագործվում է բարդ ստորադասական կառուցվածքներում, թվարկման, երկընտրական և որոշ կարգի հարցական նախադասություններում։ Թվարկման հնչերանգով անավարտ շարույթների ձևավորման մեր դիտարկումները հավաստում են այն փաստը, որ սրանք ևս արտասանվում են հիմնականում բարձրացող հնչերանգով։ Օրինակ. «Այդ բանահյուսության ժանրերից են՝ երգը, սրամտությունը, անեկդոտը և իհարկե առասպելը»։ Թվարկման բոլոր տարրերը՝ երգը, սրամտությունը, անեկդոտը, արտասանվում են տոնի շեշտակի բարձրացմամբ (6-ից 8 կիսատոնով)։ Նկատվել են դեպքեր, երբ թվարկման տարրերը արտասանվել են իջնող տոնով. մի դեպքում այն հաղորդավարի անհատական մոտեցման արդյունք է, մի այլ դեպքում պայմանավորված է ամբողջ կոնտեքստով։ Օրինակ. «Վարորդը հայհոյում էր ճանապարհը, լեյտենանտ Անտոնյանին, սերժանտ Ամատունուն և, մանավանդ, ուսուցիչ Սահակ Կամսարյանին»։ Առաջին շարույթը՝ «Վարորդը հայհոյում էր ճանապարհը», բոլոր հաղորդավարները արտասանել են իջնող տոնով, թվարկման մյուս տարրերը արտասանվել են բարձրացող հնչերանգով։ Առաջին շարույթի տոնի իջեցումը, մեր կարծիքով, կարելի է բացատրել այդ շարույթի համեմատաբար հաղորդակցական ինքնուրույնությամբ։

Փորձառական նյութի քննության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել ավարտուն և անավարտ շարույթների տոնի փոփոխման ձայնածավալի վրա։ Նկատվել է, որ անավարտ շարույթի տոնի իջեցումը չի հասնում դիապազոնի ստորին մակարդակին, այսինքն՝ դա ոչ լիակատար իջեցում է, որը սովորաբար գրանցվում է միայն ավարտուն շարույթի վերջում։ Սակայն եղել են դեպքեր, երբ անավարտ շարույթի տոնի իջեցումը տվել է ավարտուն շարույթի տոնի իջեցման համանման պատկեր։ Այս երևույթը նկատելի է այն դեպքում, երբ անավարտ շարույթները աչքի են ընկել որոշակի ինքնուրույնությամբ և կարող էին դիտվել որպես առանձին նախադասություններ։ Օրինակ. «Սայլի ճանապարհ էր, ձիավորի, ավտոմեքենայի չէր»։ Այստեղ բոլոր շարույթները արտասանվել են իջնող տոնով, որը սակայն չի հասնում դիապազոնի ստորին մակարդակին։ Այսպիսով կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Տեքստի հնչյունական նկարագրությունը ենթադրում է նրա հատուկ ֆոնետիկ հնչյունապես ձևավորված որոշակի իմաստային միավորների, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն նախադասության շարահյուսական կառուցվածքով։ Այսպիսի միավոր է շարույթը, որի սահմանում նկատվում է տոնային փոփոխություն՝ կապված ինչպես տեքստի բովանդակության, այնպես էլ դրա անհատական ընկալման հետ։ Այդ առումով շարույթ տերմինի գործածությունը ավելի նպատակահարմար է, քան շնչառական խումբ, ռիթմական խումբ կամ տոնային խումբ անվանումները, որոնք ընդգծում են ու հիմնված են խոսքի ֆիզիոլոգիական գործոնների վրա և նկատի չեն առնում իմաստային կողմը։

2. Շարույթի առավել մանրատված առանձնացումը կապվում է խոսքի, խոսողի հուզական վիճակի, նրա արտասանության ընդհանուր տեմպի, ինչպես նաև առանձին շարույթներին նրա կողմից տրվող կարևորության հետ։

3. Բազմաշարույթ նախադասության կազմում տարբերակվում են ավարտուն և անավարտ շարույթներ։ Ավարտուն շարույթի վերջավոր տոնով բնորոշվում է նախադասության հաղորդակցական տիպը, որը պատմողական նախադասությունների դեպքում արտահայտվում է ձայնի աստիճանական անկումով։ Անավարտ շարույթները բնութագրվում են բարձրացող, իջնող և հավասար տոներով՝ պայմանավորված մյուս շարույթների հետ ունեցած իմաստային կապակցության աստիճանից, ընդ որում այս դեպքում դրանք կարող են արտահայտել ոճական տարբեր երանգներ։

ИНТОНАЦИЯ ЗАВЕРШЕННОСТИ И НЕЗАВЕРШЕННОСТИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АМАЛИЯ ХАЧАТРЯН, ЛАРИСА ПАНЯН

Резюме

Среди различных единиц, выделяемых для описания интонации (ритмогруппа, топогруппа, дыхательная группа и др.), нами выбрана синтагма, характеризующаяся определенной смысловой и интонационной самостоятельностью. Аудиторский и интонографический анализ текстов произведений В. Петросяна «Последний учитель» и «Одинокая орешина» показал, что синтагмы выделяются на основе как смысла высказывания, так и эмоционального состояния говорящего. Интонация конечных синтагм определяется коммуникативным типом высказывания, а неконечных—степенью их зависимости от последующих синтагм. Наиболее самостоятельные характеризуются понижением тона, а наименее самостоятельные повышением тона или реже—ровным тоном.